ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2025

ՏԵՔՍՏԻԼ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞ր չափումների հիման վրա է որոշվում մանկական հագուստի չափը:**

1) կոնքի շրջագիծ, արտադրանքի երկարություն
2) հասակ, կրծքի շրջագիծ
3) թևքի երկարություն, գոտկատեղի շրջագիծ
4) մեջքի երկարություն, վզի շրջագիծ

2 **Նշվածներից ո՞րն է օձիքի տեսակ՝ ըստ ձևվածքի դասակարգման:**

1) կոնաձևը
2) շալաձևը
3) ալիքաձևը
4) ուղղանկյունաձևը

3 **Ե՞րբ և որտե՞ղ է առաջացել նորաձևություն հասկացությունը:**

1) 16-րդ դարում Իտալիայում
2) 4 -րդ դարում Բյուզանդիայում
3) 12 -րդ դարում Ֆրանսիայում
4) 20-րդ դարում Անգլիայում

4 **Ո՞ր կարատեսակով են իրար միացվում վերևի և ներքևի օձիքները:**

1) շրջակարով
2) զարդակարով
3) վրադիր կարով
4) փականք կարով

5 **Ի՞նչ ջերմախոնավային մշակում է անցնում գործվածքը՝ ձևելուց առաջ:**

1) նստեցում
2) լայնացում
3) հարթեցում
4) դեկատիրովկա

6 **Ո՞ր նյութը *չի* օգտագործվում դասական բաճկոնի լանջափեշատակի (подборт) միջնադիր շերտի համար:**

1) Քաթան (холст)
2) Ֆլիզելին
3) Սոսնձային
4) Սինտեպոն

7 **Ընտրեք պատկերների և տրված կարատեսակների ճիշտ համապատասխանեցված տարբերակը:**



1. ռելիեֆային վրակարված
2. դարսեր (պարզ միացնող)
3. շրջակար պարզ շրջանակով
4. կանթով միացման կար
5. ծալով կար աստառի հետ միացված

1) Ա5, Բ2, Գ3
2) Ա3, Բ1, Գ2
3) Ա1, Բ4, Գ5
4) Ա4, Բ5, Գ1

8 **Տրված մանրաթելերից ո՞րն է համարվում սինթետիկ:**

1) վուշը
2) պոլիեսթերը
3) վիսկոզը
4) ացետատը

9 **Ո՞ր համարի ասեղներ են օգտագործվում նուրբ գործվածքների համար:**

1) 90-100
2) 60-75
3) 120-140
4) 100-120

10 **Ինչպիսի՞ն են լինում մեքենաները՝ կախված թելի հյուսման եղանակից:**

1) մաքոքային և շղթայական
2) ավտոմատ և կիսաավտոմատ
3) մեկ և երկու գլխիկանի
4) երկու ասեղանի

11 **Ի՞նչ է օվերլոքը:**

1) դեկորատիվ կարեր կարելու մեքենա
2) ասեղնագործության մեքենա
3) կոճակներ կարելու մեքենա
4) գործվածքի եզրերը մաքրակարելու մեքենա

12 **Ո՞ր չափումներն են անհրաժեշտ կանգունակ օձիք ստանալու համար:**

1) վզի շրջագիծ, օձիքի երկարություն
2) հետևամասի վզի երկարություն, օձիքի բարձրություն
3) վզատեղի փորվածքի երկարություն, օձիքի բարձրություն
4) օձիքի լայնություն, առաջամասի փորվածք

13 **Ո՞րն է կարի մեքենայի մաքոքի (шпулька) հիմնական ֆունկցիան:**

1) վերին թելի մատակարարումը
2) կարի արագության կարգավորումը
3) ներքևի թելի մատակարարումը
4) կտորի տեղաշարժի ապահովումը

14 **Նշվածներից որ՞ն է նպաստում հագուստի որակի բարելավման գործընթացին:**

1) որակի վերահսկողություն յուրաքանչյուր փուլում
2) կարի արագության բարձրացում
3) կարի նախապատրաստման ժամանակի ավելացում
4) էժան նյութերի օգտագործում

15 **Ի՞նչ է ISO-ն**

1) ընկերության ֆինանսական հաշվետվություն
2) կարի մեքենայի անվանում
3) որակի կառավարման միջազգային ստանդարտ
4) տեխնոլոգիական գործընթացի փաստաթուղթ

16 **Ո՞ր կարով *չենք* կարող միացնել հագուստի ուսային և կողային կտրվածքները:**

1) ներկարով
2) վրադիր կարով
3) շրջակարով
4) փականք կարով

17 **Որո՞նք են տրիկոտաժե գործվածքների առավելությունները:**

1) բարձր խտություն և կոշտություն
2) չձգվելու հատկություն
3) առաձգականություն (эластичность)
4) ջրակայունություն

18 **Ի՞նչ է հագուստի հիմքի գծագիրը:**

1) գծագրի տարբերակ՝ առանց ավելացումների և լրացուցիչ մանրամասների
2) գծագիր, որը ծառայում է որպես հիմք տարբեր ոճերի մոդելավորման համար
3) ընտրված մոդելի ձևված տարբերակը
4) ձևաթուղթ՝ գործվածքը ձևելու համար

19 **Ո՞րն է կարի արտադրության պլանավորման հիմնական փուլը:**

1) նյութերի գնում
2) տեխնոլոգիական գործընթացի մշակում
3) արտադրանքի տեսականու և արտադրության ծավալի որոշում
4) մարքեթինգային հետազոտությունների անցկացում

20 **Հագուստի պատրաստման ո՞ր փուլում *չի* կիրառվում ջերմախոնավային մշակումը:**

1) գործվածքը կտրելուց առաջ
2) հագուստի կտրվածքների միացման փուլում
3) սոսնձային միջնադիրների ամրացման փուլում
4) վերջնական հարդարման փուլում

21 **Տրված մանրաթելերից 3-ն ունեն օրգանական ծագում: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Վիսկոզան
2. Բուրդը
3. Նեյլոնը
4. Մետաքսը
5. Պոլիեստերը
6. Լավսանը
7. Դուբլերին
8. Լատեկսը
9. Ասբեստը

22 **Տրվածներից 3-ը հագուստի հարդարող մանր մասնիկներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Երեսացուն
2. Ռելիեֆը
3. Կոկետկան
4. Գլխանոցը
5. Գրպանը
6. Բազկակալը
7. Թևը
8. Ուսադիրը
9. Սեղմոնը

23 **Տրված պնդումներից 3-ը սխալ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Կարերի մեջ գտնվող գրպանի մշակման համար օգտագործվում է գունաշերտ:
2. Տոգան՝ հին Հռոմում տղամարդու թիկնոց է:
3. Տեխնիկական մոդելավորումը գծագրի հիմքի փոփոխություն է:
4. Կամրջակը կարվում է միայն սոսնձային գործվածքից:
5. «Տեխնոլոգիական հաջորդականություն» հասկացության էությունը հագուստի պատրաստման գործողությունների ճշգրիտ հերթականությունն է:
6. Մանրաթելերը լինում են բնական, քիմիական և ֆիզիկական:
7. Նորաձևությունը խթանում է թեթև արդյունաբերության զարգացմանը:
8. Ստանդարտացումը չի նպաստում արտադրանքի անվտանգությանը:
9. Գործվածքի կառուցվածքը հենքաթելի և միջնաթելի փոխադարձ դասավորությունն է:

24 **Տրվածներից 3-ը տեխնիկական մոդելավորման եղանակներն են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Տեխնիկական էսկիզավորում
2. Գոտկատեղի գծի տեղափոխում
3. Սեղմոնների տեղափոխում
4. Հիմքի լայնացում
5. Սեղմոնների երկարեցում
6. Կոմբինացված ձևափոխում
7. Ռելիեֆների երկարացում
8. Գեղարվեստական էսկիզավուրում
9. Հիմքի փոփոխություն

25 **Տրվածներից 3-ը նշվում են ձևաթղթերի (լեկալների) վրա: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Արտադրանքի անվանումը
2. Գործվածքի երկարությունը
3. Սեղմոնների հաշվարկը
4. Հենքաթելի ուղղությունը
5. Գործվածքի թափոնների չափը
6. Հագուստի ոճը
7. Գծագրի լայնքը
8. Դետալների քանակը
9. Արտադրանքի քանակը

26 **Տրվածներից 3-ը դասվում են ոչ հյուսված տեքստիլ նյութերի շարքին: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Փարչա
2. Քեչա
3. Ռիբանա
4. Ժակկադ
5. Սինտեպոն
6. Տավիշ
7. Շիֆոն
8. Պիկե
9. Արհեստական կաշի

27 **Տրվածներից 3-ը մտնում են մեքենակարերի դասակարգման աղյուսակի մեջ: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Հանդիպակաց կարեր
2. Կցակարեր
3. Հարդարման կարեր
4. Կոկետկայի կարեր
5. Բլանդակարեր
6. Շուլալակարեր
7. Ծալքերի կարեր
8. Միացման կարեր
9. Եզրային կարեր

28 **Տրվածներից 3-ը հագուստի հիմնական ոճերն են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Ռոմանտիկը
2. Պրեպպին
3. Դասականը
4. Հիպպին
5. Մինիմալիզմը
6. Լամբերը
7. Սպորտայինը
8. Նյու լուքը
9. Բոհո

29 **Տրված 3 ցուցանիշներով գնահատվում է արտադրանքի անվտանգությունը: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Սոցիալական
2. Նյութական
3. Մեխանիկական
4. Քիմիական
5. Արտադրական
6. Ֆիզիկական
7. Բժշկական
8. Գիգրոսկոպիկ
9. Կենսաբանական

30 **Տրվածներից 3-ը չափագիտության բաղադրիչներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Նյութական
2. Սոցիալական
3. Արտադրական
4. Հիմնարար (տեսական)
5. Օրենսդրական
6. Շուկայական
7. Գործնական (կիրառական)
8. Տնտեսական
9. Մեխանիկական